



Հիմնադիրների առաջին նիստը

# Ազգային արժեքների պահպանման հետամուտ

*(ՀԲԸՄ-ի հիմնադրման փառապանծ հարյուրամյակը) (1906-2006)*

ՀԲԸՄ-ն հիմնադրվել է 1906 թվի ապրիլի 15-ին Կահիրեում (Եգիպտոս) Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ, չափազանց հեռատես ու անսակարկ հայրենասիրությամբ տոգորված տասն ազգային գործիչների նախաձեռնությամբ:

Ողջ հարյուր տարի շարունակ հայ ժողովրդի պատմության ամենաբարդագույն ու ամենածանր տարիներին ՀԲԸՄ-ն ընդառաջ է գնացել աշխարհատարած հայության կարիքներին, նպաստել նոր սերնդի հայեցի կրթության եւ դաստիարակության գործին: Միության ամենօրյա երկու տասնյակից ավելի վարժարաններում, որոնք շարունակում են գործել, ուսանում են մոտ 6000 աշակերտներ: Իսկ շաբաթօրյա 13 դպրոցները ծառայում են հարյուրավոր հայ աշակերտների: Յուրաքանչյուր տարի Միության համալսարանական կրթանպաստների ծրագրից օգտվում են ավելի քան 500 ուսանողներ, որոնք իրենց ուսումը շարունակում են աշխարհի լավագույն համալսարաններում: Միության նախագահներն են եղել Պողոս Նուբար փաշան, Գալուստ Գյուլբենկյանը, Զարեհ Բեյ Նուբարը, Արշակ Կարագյոզյանը, Ալեք Մանուկյանը եւ Լուիզ Սիմոն Մանուկյանը: Ներկայիս նախագահն է Բերճ Սեդրակյանը: Միության բարձրագույն մարմինն է Ընդհանուր ժողովը, որն ընտրում է գործադիր մարմին՝ կենտրոնական վարչական ժողով: Որոշումներն իրականացնում է կենտրոնական գրասենյակը Միության նախագահի ղեկավարությամբ: 1922-ից Միության վարչական կենտրոնը Կահիրեից փոխադրվել է Փարիզ, իսկ 1942-ից հաստատվել նախ Նյու Ջերսիում, այնուհետեւ՝ Նյու Յորքում:

Միությունն աշխարհի 22 տարբեր երկրներում ունի մասնաճյուղեր եւ հրատարակում է ամսական կամ եռամսյա հանդեսներ, որոնք լուսաբանում են հայանպաստ աշխատանքները. Նյու Յորքում՝ «Յուշարար», «ՀԲԸՄ» (տարբեր լեզուներով) եւ «Արարատ» գրականը, Բեյրութում՝ «Խօսնակը», Բուենոս Այրեսում՝ «Լուսաբացը», Կահիրեում՝ «Տեղեկատու», Ավստրալիայում՝ «Միությունը» եւ այլն: «Հաջորդ սերնդի» խորհրդատվական ծառայությունը, «Երիտասարդ արհեստավարժների» գործունեությունը, մարզական եւ սկաուտական շարժումները, մշակութային ձեռնարկներն ու հրատարակությունները կրթականի հետ զուգահեռ հավերժ երիտասարդ են պահում հարյուրամյա կազմակերպությանը:

Անշուշտ դրան նպաստում է երախտաշատ նվիրատուների անվերջանալի բանակի վստահությունը Միության գործունեության նկատմամբ: Վերջին մի քանի տարիների ընթացքում այդ բարերարների թիվը զգալիորեն ավելացել է: Եթե մինչեւ 1988-ի Հայաստանի ահավոր երկրաշարժը, Միության հիմնական եկամուտը գոյանում էր անդամության տուրքերից, կտակներից եւ նվիրահավաքներից, ապա երկրաշարժի աղետից հետո, ընդառաջելով ՀԲԸՄ-ի կոչին, հայ ժողովրդի առատաձեռն զավակներն աշխարհի տարբեր անկյուններից փութացին նյութապես սատար կանգնելու Միության նոր նախաձեռնություններին առավելապես Հայաստանում: Իսկ 1991 թվին Հայաստանի անկախացումը էլ ավելի լայն հնարավորություններ բացեց Միության առաջ, որն առավել կարեւոր դեր ստանձնելով, կամրջող օղակ դարձավ սփյուռքի եւ հայրենիքի միջեւ:

Վերջին տասնհինգ տարիների ընթացքում ՀԲԸՄ-ի բարերարների կողմից հովանավորվող հատուկ ծրագրերը, որոնցում ընդգրկվել են բոլոր տարիքային եւ սոցիալական խմբերը, 34 երկրներում ծառայել են ավելի քան չորս հարյուր հազար մարդկանց եւ ապահովել տարեկան ավելի քան 2000 հավելյալ աշխատատեղ: Այդ ծրագրերի իրականացմանը ՀԲԸՄ-ն հատկացրել է 85 մլն դոլարից ավելի:

ՀԲԸՄ-ի Հայաստանում իրագործվող ծրագրերից են.

## 1. Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ)



*ՀԱՀ ուսանողներն ավարտական հանդիսությունից հետո*

Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) շարունակում է բարձրագույն կրթության բնագավառում աննախադեպ հնարավորություն ընձեռել ուսանողներին սովորելու Մագիստրոսի կոչում շնորհող գործարար ղեկավարում, ճարտարագիտություն, իրավագիտություն, հանրային առողջապահություն, քաղաքագիտություն եւ միջազգային հարաբերություններ, եւ շրջակա միջավայրի պահպանություն բաժիններում: 2001 թվականից սկսած դրանց գումարվեց նաեւ համակարգչային եւ ինֆորմացիոն գիտությունների բնագավառում Մագիստրոսի աստիճան շնորհող ծրագիրը: Առ այսօր ՀԱՀ-ը ավարտել են ավելի քան 1500 շրջանավարտներ, որոնցից՝ շատերն արագ հաջողության են հասել իրենց ընտրած աշխատանքային գործունեության ասպարեզում՝ շնորհիվ արեւմտյան կրթական համակարգի հետ ծանոթության եւ մասնագիտական ուսումնառության: ՀԱՀ-ի երկամյա ծրագրերում սովորում են տարեկան շուրջ 400 ուսանողներ: